ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-032-17.09.2021-ՏՀ-011/0) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին հոդվածի 2-րդ մասում առաջարկում ենք «ՀՀ» հապավումը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է կատարել ընդամենը մեկ փոփոխություն եւ այն ունի ընդամենը մեկ ենթակետ, որը համարակալված է, մինչդեռ Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի», հետեւաբար՝ առաջարկվում է համարակալված «ա» ենթակետի համարը հանել եւ այն շարադրել առաջին չհամարակալված պարբերության հետ մեկ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պարբերությամբ:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված փոփոխության արդյունքում «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» ենթակետը ունենում է հետեւյալ տեսքը. «գերատեսչական եւ տեղական (համայնքային) աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, (տարածական տվյալների ենթակառուցվածք) ստեղծումը եւ վարումը», այս ձեւակերպման համատեքստում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «աշխարհագրական տեղեկատվական համակարգերի» բառերը առանձնացված են «(տարածական տվյալների ենթակառուցվածք)» բառերից ստորակետով, հասկանալի չէ, թե ինչու են «(տարածական տվյալների ենթակառուցվածք)» բառերը շարադրված փակագծերի մեջ: Առաջարկվում է խմբագրել Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվում է «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքի 6-րդ հոդվածում «Ճյուղային եւ տարածքային ծրագրեր» ձեւակերպման փոխարեն կիրառել «Ճյուղային (ոլորտային) եւ տարածքային ծրագրեր» ձեւակերպումը, փոփոխությունը կատարվում է միայն 6-րդ հոդվածում, մինչդեռ «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքի 2-րդ հոդվածում նույնպես կիրառվում է «Ճյուղային ծրագիր» ձեւակերպումը: Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ», հետեւաբար՝ առաջարկվում է ապահովել Նախագծում միեւնույն միտքն արտահայտող ձեւակերպումների միատեսակ կիրառումը:		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 24-րդ հոդված	Նախագծի 24-րդ հոդվածի մեկ համարակալված մասն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի հետեւյալ պահանջը. «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների»: Միաժամանակ նշենք, որ «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքում կետերը, չնայած Օրենքի պահանջների խախտմամբ, այնուամենայնիվ, համարակալված են տառերով, մինչդեռ Նախագծի 4-րդ հոդվածով «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքում լրացվող նոր՝ 1.1-ին հոդվածում, ինչպես նաեւ Նախագծի 20-րդ հոդվածով «Գեոդեզիայի եւ քարտեզագրության մասին» օրենքում լրացվող նոր՝ 16.5-րդ հոդվածում կետերը համարակալվում են թվերով: Հարկ ենք համարում նշել նաեւ, որ Նախագծում առկա են որոշ վրիպակներ, մասնավորապես՝ Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետի «գեոդեզիայի, քարտեզագրության տարածական տվյալների ենթակառուցվածքի» ձեւակերպման մեջ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«քարտեզագրության» ու «տարածական» բառերը պետք է իրարից անջատվեն «եւ» շաղկապով կամ ստորակետով, Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին կետում «բառերից» բառի փոխարեն պետք է կիրառել «բառից» բառը, Նախագծի 19-րդ հոդվածում «(պլանային եւ բարձունքային» ձեւակերպման մեջ բացակայում է երկրորդ փակագիծը, Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ մասի կետերի համարակալման սխալ հաջորդականությունը եւ այլն:	Ընդունվել է:	Ընդունվել է: